ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.12.2019
343-86

ՀՀ շրջակա միջավայրի
նախարար պարոն Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դեկտեմբերի 3-ին տեղեկություն ստանալու հարցում էր (343-81) ուղարկել Շրջակա միջավայրի նախարարություն՝ խնդրելով տեղեկացնել, թե ինչ դրամաշնորհային ծրագրի շրջանակում է մշակվել 2019 թ.-ի դեկտեմբերի 2-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում, տեղադրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: 2019 թվականի դեկտեմբերի 10-ին Շրջակա միջավայրի նախարարությունը ուղարկել է պատասխան գրություն, որում նշված է. ««Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱԶԾ ծրագրի շրջանակներում իրականացվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի փորձագիտական վերլուծություն»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ծրագրի շրջանակում է մշակվել 2019 թ.-ի դեկտեմբերի 2-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում, տեղադրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:
2. Տրամադրեք Շրջակա միջազվայրի նախարարության պաշտոնական կայքի հղումը, որով կարող ենք գտնել Նախարարության կողմից իրականացվող «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱԶԾ ծրագրի մասին ամփոփ տեղեկություն:
3. Որքա՞ն է «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱԶԾ ծրագրի բյուջեն:
4. Նշեք վերոնշյալ ծրագրի իրականացման ժամկետները:
5. Տրամադրեք տեղեկություն նշյալ ծրագրի շրջանակում նախատեսվող գործողությունների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ:

6. Տրամադրեք պատասխան գրության մեջ նշված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի փորձագիտական վերլուծության պատճենը և/կամ հղումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան